Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-580-02.05.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետից հանել «, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն» բառերը:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 3.1-ին մասում «ընդգրկվում է հավելավճարի գումարի 30 տոկոսը» բառերը փոխարինել «հավելավճարի գումարը հաշվարկվում է պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսի չափով» բառերով.

2) 10-րդ մասում «9-12-րդ» բառերը փոխարինել «9-12.1-ին» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասում «վերահաշվարկվում» եւ «վերահաշվարկված» բառերը համապատասխանաբար փոխարինել «հաշվարկում» եւ «հաշվարկված» բառերով:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 13-րդ մասում «8-12-րդ» բառերը փոխարինել «8-11-րդ» բառերով.

2) 17-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 18-21-րդ մասեր.

«18. Սույն օրենքով կենսաթոշակ նշանակվում է նաեւ պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն, հատուկ քննչական

ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձին, ով այդ պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունեցել է առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ եւ բավարարում է սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պայմաններին: Այս դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով, բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասի համաձայն հաշվառված անձանց, ում կենսաթոշակի չափը հաշվարկվում է այդ մասով սահմանված կարգով:

19. Պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոնից, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձի կենսաթոշակի չափը սույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկելիս հիմք է ընդունվում սույն մասում նշված ինքնավար պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափն ու հավելավճարը:

20. Պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց՝ մինչեւ 2023 թվականի հունվարի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն հոդվածի 18-րդ մասով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքով նշանակված կենսաթոշակներ:

21. Եթե կենսաթոշակառուի կենսաթոշակը հաշվարկվել է սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված կարգով, ապա նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, իսկ կենսաթոշակի չափը հաշվարկվում է սույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն: Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:»:

Հոդված 6. Օրենքի 1-ին հավելվածի՝

1) վերնագրում «1-ին մասի 8-րդ» բառերը փոխարինել «2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ» բառերով.

2) 3-րդ կետի 4-րդ ենթակետում «Անշարժ գույքի կադաստրի» բառերը փոխարինել «Կադաստրի» բառերով, իսկ 28-րդ ենթակետում «Սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական» բառերով.

3) 4-րդ կետի 12-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 7. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը տարածվում է 2022 թվականի հուլիս 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա եւ նշանակված կամ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն հաշվարկված կենսաթոշակները հաշվարկվում են նշանակման կամ Օրենքի 9-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն հաշվարկման օրվանից (այդ մասում նշված կարգով):